Հրազդանի Խ. Աբովյանի անվան **N1** ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթական ուսուցիչների

վերապատրաստում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **- <<** ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԶՈՐԱԿՈԶԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՏՂԱՆՆԵՐԻ ՄՈՏ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՅՈՒՄՈՎ **>>**

Առարկա՝ ՆԶՊ և անվտանգ գործունեություն

ԿԱՏԱՐՈՂ՝ **-** ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԴՊՐՈՑ՝ **-** ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ Ա.Ս.Մարգարյան

Առարկա՝ Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն	
Դասարան՝12- րդ	Ուստարի 2023-2024
Բաժին	Մարտավարության հիմունքներ
Թեմա	Զրահատեխնիկայի խոցելի տեղերը
Բաժնի նպատակը	Ա. Գիտենա՛լ Զրահատեխնիկայի խոցելի տեղերը և խոցման միջոցները: Բ. Գիտենա՛լ Զրահատեխնիկայի նշանակությունը: Գ. Գիտենա՛լ Զրահատեխնիկայի գործողությունները ժամանակակից մարտում:
Դասի նպատակը	Տալ գիտելիքներ զրահատեխնիկայի մասին, որպես նշանակալի և կարևորագույն միջոց ժամանակակից պատերազմում: Տալ գիտելիքներ՝ զրահատեխնիկայի խոցման համար անհրաժեշտ զինատեսակի ընտրության, զրահատեխնիկայի թույլ տեղերի դասավորվածության վերաբերյալ, դրանք արդյունավետ և նպատակային խոցելու համար:
Արժևորում	Մեդիա կարողունակություն, մշակույթային կարողունակություն, բնագիտական կարողունակություն
Վերջնարդյունք	Թեմայի ուսուցումը աշակերտներին հնարավորություն կտա Գիտենա՛լ զրահատեխնիկայի մասին, որպես նշանակալի և կարևորագույն միջոց և զրահատեխնիկայի խոցման համար անհրաժեշտ զինատեսակների ընտրության, զրահատեխնիկայի թույլ տեղերի դասավորվածության վերաբերյալ, դրանք պատերազմի ժամանակ արդյունավետ և նպատակային խոցելու համար:
Ընդհանրական խաչվող հասկացությունները:	Ռազմավարություն Կարողանալ ապահովել պաշտպանություն և կազմակերպել զրահատեխնիկայի խոցում: Կոնկրետ առաջացած իրավիճակի վերլուծման և գնահատման արդյունքում հասնել մարտական խնդիրը կատարմանը:
Միջառարկայական կապերը:	Ինֆորմատիկա - Կարող է օգտվել համակարգչից ու ինտերնետի տեղեկատվական աղբյուրներից և նյութի համակարգչային ներկայացում ապահովել: Ռուսերեն (այլ օտար լեզու) - Կարող է ինտերնետի նյութը հասկանալ, թարգմանել հայերեն: Հայոց լեզու - Կարող է նյութը ներկայացնել համակարգված, իր մտքերն արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:

Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ:	Դասագիրք, համացանց, տեսասկավառակ
Ուսուցման մեթոդներ:	Բացատրական-ցուցադրական, զրույց, բանավեճ:
Գործողություններ և առաջադրանքներ	Ներկայացված թեմաի ուսումնասիրություն և վերլուծություն:
Անցկացման վայրը	ՆԶՊ դասարան
Գնահատում	Իրականացվում է ձևավորող գնահատում ինքնագնահատում, փոխգնահատում:

Դասի ընթացքը

- Աշակերտների հաշվառում՝ 2 րոպե
- Նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով՝ 10րոպե
- Նոր նյութի հաղորդում և ամրապնդում՝ 20 րոպե

1.Որն է զրահատեխնիկայի նշանակությունը:
2.Ի՞նչ է ապահովում զրահատեխնիկան:
3. Զրահատեխնիկայի ի՞նչ տեսակներ գիտեք:
4.Որն է զրահատեխնիկայի հիմնական դերը մարտադաշտում:
5. Ո՞րոնք էն հեռանկարային զարգացումները զրահատեխնիկայի համար
6. Զրահատեխնիկայի խոցման համար ինչ զինատեսակներ գիտեք

Դիտումներ, դիտարկումներ	Մարտավարություն և կրակային պատրաստություն Ուղղակի և անուղղակի գործողություններ

Աշակերտների ընտրվող հնարավոր հարցերի օրինակներ, որոնք ներգրավում են մեծ քանակով աշակերտների

1.Ի՞նչի համար է նախատեսված զրահատեխնիկան:
2.Զրահատեխնիկայի ի՞նչ տեսակներ կան
3. Ի՞նչ առավելություն է տալիս զրահատեխնիկայի կիրառումը:
4.Որն է զրահատեխնիկայի հիմնական դերն մարտադաշտում:
5.Ո՞րոնք էն հեռանկարային զարգացումները զրահատեխնիկայի համար
6. Զրահատեխնիկայի խոցման համար ինչ զինատեսակներ գիտեք՝ Օրինակ,

Գրականություն.

Գրականություն.

- Վ. Օհանյան,Լ. Ղազարյան և ուրիշներ, ՆԶՊ 11-րդ դասարանի դասագիրք, Երևան 2010 թ.
- Ս. Մանուկյան, Գ. Ճաղարյան, Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, Երևան 2017թ.
- Մեր հաղթանակները, հատոր Դ, Երևան 2012 թ.
- Հ. Գ. Ժամկոչյան և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև 18-րդ դարի վերջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Գրական համատեքստ	5-8
Հետազոտության ընթացքը	9-12
Ամփոփում/եզրակացություններ/	13

Նախաբան

Այն ինչ այսօր երեխաները կարող են անել

միասին,վաղը դա նրանք կանեն միայնակ

Լև Վիգոտսկի

Ներկայացվող աշխատանքում առաջ է քաշվել ուսումնառության ընթացքում աշակերտների մտածողության զարգացման խնդիրը: Կատարվել է հետևյալ հետազոտական հարցադրումը արդյո՞ք համագործակցային ձևաչափով կիրառվելիս ուսումնառության ռազմավարությունները ավելի դրական են ազդում աշակերների մտածական կարողությունների վրա՝ զարգացնելով դրանք և բարձրացնելով աշակետների ընկալունակությունը:

Հետազոտության արդիականությունը հաշվի առնելով այն փաստը, որ կրթությունն այսօր հանդիսանում է անհատի լիարժեք և բազմակողմանի զարգացման հիմնական բաղադրիչը, մեծ նշանակություն է տրվում դասավանդման մեթոդներին: Բացի այդ, ժամանակակից տեխնոլոգիաների դարում, երբ գնալով նվազում է անմիջական միջանձնային շփման անհրաժեշտությունն ու կարևորությունը, ուսուցիչը կատարում է նաև սոցիալական կրթության ֆասիլիտատորի դեր՝ ապահովելով աշակերտների ինտեգրումը հասարակության մեջ, որի փոքր մոդել է հանդիսանում դասարանը: Այսպիսով, ներկայացվող հետազոտության արդիականությունը հիմնավորվում է աշակերտներին «սովորել սովորեցնելու», այսինքն հենց մտածողությունը (մասնավորապես

ինտելեկտուալ և ստեղծագործական) զարգացնելու նպատակ հետապնդող ուսումնառություն կազմակերպելու անհրաժեշտությամբ, որը ենթադրում է որպես գործիք օգտագործելով դասավանդման ինտերակտիվ մեթոդներ՝ ապահովել դինամիկ և հագեցած ուսումնական գործընթաց: Հետազոտության վարկած. համագործակցային ուսուցումը արդյունավետ մեթոդ է հանդիսանում սովորողների մտածողությունը զարգացնելու համար (ավագ դպրոցի 10-րդ դասարանի ՆԶՊ դասին»): Որպես եզրային փոփոխություն ակնկալվում է համագործակցային աշխատանքի արդյունքում աշակերտների մեծ մասի ուսումնառության արդյունքների բարելավում՝ մտածական միջին և բարձր մակարդակի հմտություններ պահանջող առաջադրանքների մասով:

2. Հետազոտական համատեքստ/գրականության ակնարկ /

Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար

խաբուսիկ են բոլոր դրախտները:-Գարեգին Նժդեհ

Արդյունավետ ուսումնառությանը նպաստող տեխնիկաների մշակման և զարգացման գործընթացներին վերաբերվող հետազոտություններում կարևորվում են սովորողների ճանաչողության՝ իմանալու, հասկանալու, խնդիրներ լուծելու անհատական բնույթը և դրանով էլ պայմանավորված աշակերտների ուսումնառության եղանակների վերաբերյալ գաղափարները: Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում սոցիալ-կառուցողական տեսության կողմնակիցների մոտեցումը սույն աշխատանքում հետազոտվող խնդրին. կարևորելով խոսքի, հաղորդակցման ազդեցությունը յուրաքանչյուր անհատի մտածողության զարգացման վրա, նրանք խրախուսում են ուսումնառական համայնքների ստեղծման, զույգերով և խմբերով աշխատանքների կազմակերպման գաղափարը (Capel, Leask, Younie, 2016): Մանկավարժության մեջ մեծ ճանաչում ձեռք բերած համագործակցային ուսուցման մեթոդները սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը դիտարկում են որպես ուսումնառության արդյունավետությունը խթանելու միջոց՝ ապահովելով դրական փոխկապակցվածություն, անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի սոցիալական հմտություններ (Զոհրաբյան և այլք, 2002): Ժամանակակից հոգեբանության և մանկավարժության ոլորտի տեսական և գործնական հետազոտությունների արդյունքում ձևավորվել է «Ուսումնառության գործընթացի ակտիվացման» գաղափարը, որը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը նախատեսում է ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում իսկ աշակերտի կողմից մտապահում և վերարտադրում, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում (Бобрышов, Смагина, 2010): Ուղղված լինելով առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, ակտիվ մեթոդներով

ուսումնառության գործընթացը այնուհանդերձ բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է ողջ ուսուցումը անցկացնել միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները (համագործակցությամբ ուսուցում, ուսուցողական խաղեր, պրոբլեմային ուսուցում և այլն) պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը՝ապահովելով կրթական խնդիրների լուծում տարբեր տեսանկյուններից: Հատկանշական ՝ այն, որ խմբային աշխատանքի արդյունքում սովորողների մոտ զարգանում են այնպիսի մտածողական հմտություններ, ինչպեսիք են գնահատումը, վերլուծումը,կառուցումը (Петти, 2010): Այս հետազոտության համատեքստում հատկապես կարևոր է որպես համագործակցային ուսուցման տարբ ինտերակտիվ առաջադրանքների պլանավորումը և կիրառումը այն առումով, որ դրանք պետք է նպաստեն սովորողների համագործակցությանը, նրանց ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին՝ ապահովելով ուսումնասիրվող նյութի ընկալման և մտածողական հմտությունների մակարդակի բարձրացում, ուսումնառության առաջընթացի գրանցում (Հովհաննիսյան և այլոք, 2006): Ուսումնառության պրոցեսում առաջադրանքների բնույթի կարևորությունը շեշտադրվել է հոգեբանության «կոգնիտիվ» դպրոցի կողմից առաջ քաշվող ուսումնառության կառուցողական տեսության դրույթներում (Петти, 2010, стр. 29-31). • «Գործնական խորը գիտելիքներ ձևավորելու համար ուսուցչները պետք է տրամադրեն մտածական բարձր՝ Բլումի տաքսոնոմիայի վերլուծության, սինթեզի, գնահատման հմտություններ պահանջող մակարդակներին համապատասխան առաջադրանքներ: • Դասակարգման բարձր մակարդակների մտածական հմտությունները չեն համարվում բնածին տաղանդ. դրանք կարելի է ձևավորել և զարգացնել ուսումնառության ընթացքում: • Առաջադրանքները պետք է կազմել «սանդղակի» ձևով. Օգտակար է առաջադրանքները կազմել այնպես, որ դրանք աստիճանաբար բարձրանան ըստ Բլումի տաքսոնոմիայի սանդղակների»: Ժամանակակից մանկավարժության մեթոդաբանական գրականության մեջ բերվում և ըստ կիրառման նպատակահարմարության մեկնաբանվում են համագործակցային ուսուցման կազմակերպման արդյունավետ մեթոդներ ու հնարներ Սույն ուսումնասիրության շրջանակներում ուշագրավ է նաև Սլավինի կողմից մշակված «Աշակերտների թիմային առաջադիմության» մեթոդը այն առումով, որ կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլ նաև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ: Այստեղ էականն այն է, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը : Անկախ մեթոդի ընտրությունից, բոլոր դեպքերում մասնակցությունն առավելագույնի հասցնելու նպատակով ակտիվ ուսումնառության ռազմավարությունների արդյունավետ կառավարման համար կարևորվում են համագործակցային ուսուցման խմբերի տեսակները, ձևավորման սկզբունքները, չափերը, անդամների միջև դերերի բաշխումը, առաջադրանքի կառուցվածքը, խմբային աշխատանքի հաջողության ցուցիչները,ստուգումը, շտկումը, հետադարձ կապը և ամփոփումը (Petty, 2002): Այսպիսով, անդրադառնալով համագործակցային ուսուցման տեսական հիմքերին և գործնական կիրառության ոլորտներին և դիտարկելով մտածողությունը որպես

իմացական գործընթաց, տրամաբանական է դիտարկել մտածողության զարգացման հնարավորությունը համագործակցային ուսուցման ենթատեքստում: Այս խնդրի շուրջ մեկնաբանությունները խաչվում են հոգեբանության և մանկավարժության բնագավառում կատարված տեսական և գործնական հետազոտությունների շրջանակներում: Մ. Կլարինը հետազոտում է ուսումնառության ընթացքում մտածողության զարգացման խնդիրը և որպես քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնող մոդել առանձնացվում է ուսումնառության ակտիվ մեթոդների՝ մասնավորապես 8 բանավեճերի և ուսումնական դերախաղերի միջոցով կազմակերպվող համագործակցային ուսուցումը (Кларин, 2004): Արևիկ Անափիոսյանը առաջ է քաշում հետևյալ հետազոտական հարցադրումը.

- արդյո՞ք դասավարդման մեթոդները ազդում են քննադատական մտածողության ձևավորման վրա, և բերում է փորձնական հետազոտություններով հիմնավորված փաստեր առ այն, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը (Անափիոսյան, 2012):
- Ն.Դավոյանը անդրադառնում է սովորողների քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման գործընթացին և փաստում է, որ Բլումի տաքսոնոմիայի մակարդակների տարազատումն արդյունավետ հատկապես առաջադրանքների և վարժությունների ընտրության և ստեղծման գործընթացում, քանի որ խնդիր է դրվում նպատակադրել ոչ միայն գիտելիքի ձեռքբերումը, այլև փոխել գիտելիք ձեռք բերելու ընթացքում սովորողների վարքագիծը (Դավոյան, 2016):
- Ամփոփելով բերված գրականության վկայությունները, հարկ է նշել, որ սույն հետազոտության խնդիրը արդիական է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական մանկավարժության և կիրառական հոգեբանության բնագավառում: Սակայն բերված ուսումնասիրությունները հիմնականում տեսական բնույթ են կրում և գործնական հիմնավորումների կարիք ունեն: Սույն հետազոտական աշխատանքի նպատակներից է փորձառության հետազոտության վկայությունների վրա հիմնված ուսումնառության միջոցով հետազոտել առաջադրված խնդիրը և կատարել համապատասխան եզրահանգումներ:

ՏԱՆԿԵՐԻ ԴԵՐԸ

Հողը մի կենդանի էակ է, նա ունի իր հոգին,

և առանց հայրենիքի, առանց հարազատ

հողի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել

իրեն, իր հոգին: –Մարտիրոս Սարյան

Մինչև հիմնական նյութին անցնելը ես աշակերտներին տվի հետևյալ հարցը

Եթե մեր բանակում ծառայությունը պարտադիր չլիներ, Դուք կցանկանայի՞ք ծառայել բանակում.»՝ ստացա հետևյալ արդյունքը

- Ա) միանշանակ այո՝ **22 –(14%),**
- Բ) կարծում եմ այո՝ **40 – (26%)**
- Գ) ոչ՝ **3–(1,9%)**



Երբ սկսեցի հայրենիքի պաշտպանության մասին խոսել, մտքերի տարափ մեթոդիով հասկացա որքանով են տեղեկացված մեր սպառազինությանը, իսկ երբ հարցը հասավ Տանկի կամ Հրասայլը, «Զրահասայլը» զրահապատ թրթուրավոր

ռազմական մեքենաի մասին երեխաների ոգևորությունը ավելի մեծացավ համագործակցային մեթոդի միջոցով և տեսահոլովակի միջոցով ներկայացրինք նոր նյութը:,

- Տանկը կամ Հրասայլը, «Զրահասայլը» զրահապատ թրթուրավոր ռազմական մեքենա է, որի հիմնական զենքը սովորաբար հրանոթն է:Տանկաշինության սկզբնական ժամանակաշրջաններում տանկերը շատ դեպքերում արտադրվում էին միայն գնդացրային զենքով, իսկ Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո փորձեր էին արվում ստեղծելու հրթիռային հիմնական զենքով զինված տանկեր: Հայտնի են տանկերի տեսակներ, որոնք ունեցել են հրանետ: Տանկը ճշգրիտ նշանակում չունի, քանի որ տարբեր ժամանակաշրջաններում տանկի հայեցակարգը ձևափոխվում էր և տարբեր էր զանազան երկրների բանակներում: Առաջին Համաշխարհային պատերազմի տանկերն առաջին հայացքից կարող են անճանաչելի թվալ , կամ նույնիսկ մի քանի շվեդական փորձագետներ **Strv-103** մեքենան որակում են որպես տանկեր ոչնչացնող, այլ ոչ տանկ: Որոշ մեքմեքենաներ, որոնք ռուսաստանյան գրականության մեջ անվանվում են «փոքր տանկեր», արևմտյան գրականությունում անվանվում են տանկետներ:
- **Strv-103 Leopard 2A7 (Germany) K2 Black Panther (South Korea M1A2 Abrams (USA**

- Ժամանակակից բանակների զինանոցում այժմ համարյա թե կա միայն մեկ տեսակի տանկ՝ այսպես կոչված հիմնական մարտական տանկը: Այսպիսի տանկի դերը երկակի է՝ վարել ինքնուրույն մարտական գործողություններ հակառակորդի տանկային ուժերի դեմ և սատարել ռազմական մյուս ենթաուժերին իրենց մարտական խնդիրներում այսպես կոչված «միավորված ուժեր» **(combined arms)** տակտիկայով:
-

ՀԱԿԱՏԱՆԿԱՑԻՆ ԶԵՆՔԵՐ

Ֆաուստպատրոն

- ՖաուստափամփուշտՖաուստափամփուշտ , ձեռքի նռնականետիչ, միակի գործողության զենք՝ տանկերը և զրահավոր այլ նշանակետերը խոցելու համար:
- Բաղկացած է կումուլյատիվ նռնակից, որը պոչամասով դրվում է երկու կողմից բաց՝ վառոդալիցքով փողի մեջ: Նշանառու հրածգության հեռավորությունը մինչև 30 մ է, զրահախոցելիությունը՝ մինչև 200 մմ, զանգվածը՝ 5,35-3,25 կգ:
- Ֆաուստափամփուշտն առաջին անգամ կիրառել են գերմանաֆաշիստական զորքերը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում:
- Նռնականետ «ՌՊԳ 22»
-
- Խորհրդային հակատանկային նռնականետը կրակում է ռեակտիվ նռնակներով, կիրառվում է ինքնագնաց հրետանային սարքերի, տանկերի և հակառակորդի այլ զրահատեխնիկայի դեմ: Նռնականետը ընդունվել է սպառազինության 1961թ.-ին:

Դասի վերջի 5 րոպեի ընթացքում անդրադարձ կատարեցի հյոքթի ամրապնդման մասին և ստացա վերջնարդյունքը այս տեսքով



-) ՆԶՊ՝ 55-(35%),
- Բ) հումանիտար առարկաներ՝ 8-(5%),
- Գ) երկուսը միասին՝2-(1%):

Այս տոկոսները բ վերածվեցին ձևավորվող . այնուհետև միավորային գնահատման:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե

դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր

չեք: –Գարեգին Նժդեհ

Իմ նպատակն էր ՝

Տալ գիտելիքներ զրահատեխնիկայի մասին, որպես նշանակալի և կարևորագույն միջոց ժամանակակից պատերազմում:

Տալ գիտելիքներ՝ զրահատեխնիկայի խոցման համար անհրաժեշտ զինատեսակի ընտրության, զրահատեխնիկայի թույլ տեղերի դասավորվածության վերաբերյալ, դրանք արդյունավետ և նպատակային խոցելու համար: Պաստառների և ֆիլմի դիտումով երեխաներին ծանոթացնել խոցման միջոցների հետ:

Թեմայի ուսուցումը աշակերտներին հնարավորություն կտա.
Գիտենա՛լ զրահատեխնիկայի մասին, որպես նշանակալի և կարևորագույն միջոց և զրահատեխնիկայի խոցման համար անհրաժեշտ զինատեսակների ընտրության, զրահատեխնիկայի թույլ տեղերի դասավորվածության վերաբերյալ, դրանք պատերազմի ժամանակ արդյունավետ և նպատակային խոցելու համար: